

## ԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՍՏՐՅԱՆ

Ծնվել է 1968թ. սեպտեմբերի 1-ին Երևանում:

1983թ. ավարտել է Երևանի Ն. Կրուպսկայայի անվան թիվ 19 միջնակարգ դպրոցի ութամյա դասընթացը և Երևանի մանկական ձայնի պահպանման երաժշտական դպրոցը:

1983-1987թթ. սովորել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի տեսական բաժնում:

1987-1992թթ. սովորել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ-տեսական ֆակուլտետի երաժշտագիտության բաժնում, 1991-1992թթ. եղել է Կոնսերվատորիայի գիտխորհրդի անդամ:

1991-2003թթ. դասավանդել է Երևանի Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում:

1997-2001թթ. սովորել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտուրայում՝ երաժշտական արվեստ մասնագիտության գծով:

2000-2002թթ. աշխատել է Հայկական բաց համալսարանի երաժշտագիտության ֆակուլտետի դեկան, ամբիոնի վարիչ, ընտրվել է համալսարանի գիտխորհրդի անդամ:

2001թ. դեկտեմբերի 12-ին պաշտպանել է թեկնածուական թեզ «Տիգրան Զուխաճյանի օպերաները» թեմայով և ստացել արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

2002թ. ապրիլի 1-ին աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում որպես գիտաշխատող, 2003թ. նշանակվել է նույն ինստիտուտի գիտքարտուղար, օգոստոսին ընտրվել է գիտխորհրդի անդամ, գիտխորհրդի քարտուղար:

2002թ. մայիսին հիմնել է «Տիգրան Զուխաճյան» հիմնադրամը և ընտրվել հիմնադրամի գործադիր կոմիտեի նախագահ:

2004թ.-ից ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղարն է:

2005թ. նշանակվել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն:

2005-2007թթ. ղեկավարել է ՀՀ պետյուզեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորմամբ «Տիգրան Զուխաճյանի երաժշտական թատրոնը», իսկ 2008-ից՝ «Տիգրան Զուխաճյանի ստեղծագործական ժառանգությունը» թեմաները:

2008թ. պաշտպանել է դոկտորական թեզ «Հայ երաժշտական թատրոնը ԺԹ դարի երկրորդ կեսին. սկզբնավորումը և զարգացումը» թեմայով և ստացել արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:

2009թ. մարտի 1-ից ղեկավարում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի բաժինը:

2009թ. մարտի 11-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ նշանակվել է Հանրային խորհրդի անդամ: Մայիսի 31-ին ՀՀԿ համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ: Սեպտեմբերի 8-ին ընտրվել է Երևան քաղաքի ավագանու գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի, առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության անդամ է, Բնության և հասարակության մասին միջազգային ակադեմիայի իսկական անդամ:

Պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալով, ՀՀ մշակույթի նախարարության պատվոգրով, ՀՀ ԳԱԱ գովեստագրով, ՀՀ ԳԱԱ նախագահության պատվոգրով:

3 մենագրությունների և ավելի քան 50 գիտական հոդվածների հեղինակ է, գեկուցումներով հանդես է եկել միջազգային և հանրապետական մի շարք գիտաժողովներում:

